

ՐԱՅԱԿԱՆ ԿԵՐՊԸ ՀԱՅՆԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՆՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԱՍԽԱՆԳՈՒՅԱՆ

Բայական կերպը մեկն է այն բարդ քերականական կարգերից, որի վերաբերյալ ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում առ այսօր շատ բան մնում է մինչև վերջ չպարզաբանված և վիճելի:

Հայագիտության մեջ, սկսած Մ. Աբեղյանից, ընդունված է բայական կերպի գոյությունը արդի հայերենում: Սակայն տվյալ քերականական կարգի էության ըմբռնման, կերպային ձևերի (կերպերի) քանակի և դրանց միջև եղած իմաստային հակադրության, տվյալ բայաձևի այս կամ այն կերպին սլատկանելու հարցում հայագիտության մեջ միասնական կարծիք չկա: Ինչ վերաբերում է անգլերենին՝ բայական կերպի քերականական կարգի գոյությունն այդ լեզվում հաճախ կասկածի տակ է առնվում:

Հայերենում ավանդաբար ընդունված է եղել առանձնացնել չորս կերպ՝ կատարվող, կատարված, կատարելի և պարզ: Դրանք, ըստ Մ. Աբեղյանի տված սահմանումների, բնութագրվում են հետևյալ կերպ. կատարվող կերպը ցույց է տալիս շարունակվող, դեռ չվերջացող գործողություն (գնում է, գնում էր, գնալիս կլինի), կատարված կերպը՝ արդեն կատարված, վերջացած գործողություն (գնացել է, գնացել էր, գնացած կլինի), կատարելի կերպը՝ դեռ նոր կատարելի, ապագա գործողություն (գնալու է, գնալու էր, գնալու կլինի), պարզ կերպը՝ մի որոշ ժամանակակետում ընկնող սոսկ գործողություն, առանց ուշադրություն դարձնելու գործողության տևական, վերջացած կամ կատարելի լինելուն (գնամ, տեսնեմ. գնացի, տեսա. կգնամ, կտեսնեմ)¹:

Հայերենի կերպերի ըմբռնման Մ. Աբեղյանի այս մոտեցման մեջ կան մի շարք էական կողմեր, որոնք սկզբունքային առարկությունների հիմք են տալիս: Նախ և առաջ այնքան էլ պարզ չէ, թե ինչ է հասկանում հեղինակը բայական կերպ ասելով, քանի որ նշված աշխատության մեջ չենք գտնում կերպի քերականական կարգի որոշակի, հստակ սահմանում²: Դատելով այն սահմանումներից, որոնք հեղինակի կողմից տրված են կերպային ձևերի բնութագրման և առանձնացման համար, առաջին երկու կերպային ձևերը (կատարվող և կատարված) արտահայտում են անպիսի իմաստներ, որոնք ռուսերենի ավանդական քերականության մեջ սահմանվում են որպես անկատար և կատարյալ կերպերի իմաստներ: Ինչ վերաբերում է երրորդ (կատարելի) կերպի բնութագրմանը, ապա այն փաստորեն ավելի շուտ ժամանակային և ոչ թե կերպային բնութագիր է, քանի որ համարյա չի տարբերվում

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 299—300 և 557—558:

2 Մ. Աբեղյանի տված բացատրության համաձայն, կերպերը ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակահատի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ (նույն տեղում, էջ 557):

ապառնի ժամանակին տրվող բնութագրից: Այնուհետև, ձեռքան տեսակետից, այսինքն՝ արտահայտության պլանում, նկատվում է որոշակի անմիօրինակություն. առաջին երեք կերպերից յուրաքանչյուրի ներսում բերված եռանդամ շարքերի մեջ վիճելի է գնալիս կլիճի, գնացած կլիճի, գնալու կլիճի տիպի կապակցությունները հայերենի բայի հարացուցային վերլուծական ձևերի շարքը դասելու: Այսպես, եթե գնում եմ/էի, գնացել եմ/էի, գնալու եմ/էի կապակցությունների դեպքում գործ ունենք բայի վերլուծական ձևերի հետ, որոնք կազմված են համապատասխան դերբայներից (գնում, գնացել, գնալու) և «եմ» օժանդակ բայի սահմանական եղանակի ձևերից, ապա վերջին երեք կապակցությունների մեջ օգտագործված են այլ դերբայներ (գնալիս, գնացած, գնալու) և այլ օժանդակ բայ՝ «լինեմ»: Բացի այդ, երկրորդ կապակցությունների մեջ տեղի է ունենում մոդալականության պլանի փոփոխություն (կլիճեմ ձևը ենթադրական, և ոչ թե սահմանական եղանակի ձևն է): Դա նույնպես հիմք չի տալիս դիտելու, օրինակ, գնացել եմ/էի և գնացած կլիճեմ հակադրությունը որպես այնպիսի ձևերի հակադրություն, որոնք միմյանցից տարբերվում են միայն ժամանակային պլանում: Վերջապես, ըստ Մ. Աբեղյանի ըմբռնման, հայերենի կատարված կերպի իմաստ արտահայտող բայաձևերի շարքից դուրս են մնում գնացի, տեսա և նման ձևերը, որոնք անկասկած արտահայտում են կատարված, ավարտված գործողություն, այսինքն՝ կերպային առումով կատարված կերպի ձև են: Նա, սակայն, տվյալ ձևը անջատել է կատարված կերպի մյուս ձևերից և դասել այն ձևերի շարքը, որոնք բնութագրել է որպես պարզ կերպի ձևեր: Պարզ կերպը, ըստ Մ. Աբեղյանի, բնութագրվում է տևականությամբ—ավարտվածությամբ հակադրության բացակայությամբ³: Միանգամայն ակնհայտ է, սակայն, որ գնացի, տեսա և այլն ձևերի մեջ առկա է գործողության ավարտվածության իմաստը, այլ կերպ ասած՝ կատարված կերպի իմաստը, որի մասին է վկայում նաև այդ ձևի ավանդական անվանումը՝ անցյալ կատարյալ (ի հակադրություն անցյալ անկատարի)⁴:

Հայերենի բայի կերպերի վերաբերյալ Մ. Աբեղյանի մոտեցումը որոշ ձևափոխություններով դրվել է կերպի կարգի մեկնաբանության հիմքում Գ. Սևակի գրքում⁵: Զուգադրելով հայերենի բայի բաղադրյալ (վերլուծական) և պարզ (համադրական) ձևերը, հեղինակը նշում է, որ առաջինները բնութագրվում են յուրահատուկ իմաստով, որը բացակայում է պարզ ձևերի մեջ. բաղադրյալ ձևերը ցույց են տալիս գործողության ընթացք, վիճակ, որն արտահայտվում է այդ ձևերի հիմնական բաղադրիչի՝ համապատասխան դերբայի մեջ: Այսպես, գնում, գնալու արտահայտում են կատարման ընթացքի

3 Մ. Աբեղյանի առանձնացրած երրորդ, այսպես կոչված կատարելի կերպի իմաստը դժվար է սահմանել նրան տրված բնութագրի հիման վրա:

4 Դրան ուղադրություն է դարձրել նաև է. Բ. Աղայանը, ըստ նրա, անցյալ կատարյալը ցույց է տալիս ավարտված, վերջացած գործողություն և գործողության վիճակի տեսանկյունից այդ ձևը իր իմաստով համընկնում է կատարված կերպի մյուս ձևերի հետ: Չնայած, իր այս դիտողությանը, է. Բ. Աղայանը նույնպես անշատում է անցյալ կատարյալի ձևը կատարված կերպի մյուս ձևերից և հակադրում դրանք, բնութագրելով այն որպես պարզ կերպի ձև (տե՛ս է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 369—370):

5 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 305—307:

մեջ գտնվող գործողություն, գնացել, եկել՝ ավարտված գործողություն, գնալու, գալու՝ սպասելի, կատարելի գործողություն: Այնուհետև հեղինակը նշում է, որ «դերբայների արտահայտած այս իմաստը կապակցվելով օժանդակ բայի արտահայտած ժամանակի իմաստի հետ՝ ցույց է տալիս գործողության վիճակի հարաբերությունը ներկա, անցյալ կամ ապառնի ժամանակակետի հետ»⁶, Որպես օրինակ բերվում են նույն եռանդամ շարքերը. գնում եմ, գնում էի, գնալիս կլինեմ՝ կատարվող կերպ, գնալու եմ, գնալու էի, գնալու կլինեմ՝ կատարելի կերպ: Սրանից ելնելով էլ հեղինակը տալիս է կերպի քերականական կարգի ընդհանուր սահմանումը, ըստ որի բայական կերպը ցույց է տալիս գործողության վիճակի տարբեր հարաբերումները ժամանակակետի հետ»⁷: Այնուհետև առանձնացվում են Մ. Աբեղյանի նշած նույն երեք կերպերը՝ կատարվող, կատարված և կատարելի: Ինչ վերաբերում է Մ. Աբեղյանի առանձնացրած չորրորդ՝ պարզ կերպին, ապա բայական այդ ձևերը Գ. Սևակը բնութագրում է որպես կերպ լուսնեցող, աճկեռայ, որոնց շարքն է նա դասում սահմանական եղանակի անցյալ կատարյալը և մյուս եղանակների բոլոր ժամանակային ձևերը⁸:

Այսպիսով, ինչպես Մ. Աբեղյանը, Սևակը ևս կատարված կերպի տակ գնում է վաղակատարի ձևերը, բայց ոչ անցյալ կատարյալը, որը դիտվում է որպես կերպ լուսնեցող՝ անկերպ բայաձև: Եվ միանգամայն անհասկանալի է մնում, թե ինչու պիտի պահպանել տվյալ բայաձևի ավանդական անվանումը՝ անցյալ կատարյալ, եթե, ըստ Սևակի, այդ ձևը զուրկ է կերպային բնութագրից: Մինչդեռ մեր կարծիքով տվյալ բայաձևի ավանդական անվանումը միանգամայն ճիշտ և հիմնավորված է, քանի որ հայերենում գոյություն ունի իմաստային շատ որոշակի հակադրություն անցյալի այնպիսի բայաձևերի միջև, ինչպես՝ գրում էի—գրեցի, տեսնում էի—տեսա և այլն, որն անկասկած կապված է հայերենի այս բայաձևերի կերպային բնութագրման հետ, ձևեր, որոնք ավանդաբար կրում են անցյալ աճկատառ և անցյալ կատարյալ անվանումները:

Բայական կերպի հարցի նման հակասական լուծումը հայերենի ավանդական քերականության մեջ բխում է մի կողմից կերպի քերականական կարգի յուրօրինակ ըմբռնումից, մյուս կողմից հետևանք է հայերենի կերպային հակադրություններ արտահայտող բայական հիմքերի ոչ այնքան հստակ ու հետևողական ձևաբանական-իմաստային վերլուծության:

Հայերենի բայական կերպի ավանդական ըմբռնումը արմատապես վերանայել է Գ. Բ. Զահուկյանը⁹: Նա, արդի հայերենի բայահիմքերի կառուցված-

⁶ Նույն տեղում, էջ 306:

⁷ Նույն տեղում: Պետք է նշել, որ սահմանման մեջ տեղ է գտել որոշակի անճշտություն. տարբեր կերպերի դեպքում, հեղինակի ըմբռնմամբ, տարբեր են ոչ թե հարաբերումները, այլ գործողության վիճակները: Հետևաբար ճիշտ կլիներ ասել, որ կերպը ցույց է տալիս գործողության տարբեր վիճակներ հարաբերումները ժամանակակետի հետ (խոսքը վերաբերում է եղանակային ձևերին):

⁸ Նույն տեղում:

⁹ Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 229—237:

քային-իմաստային համակողմանի վերլուծության հիման վրա, եկել է այն եզրակացության, որ հայերենում բայական «մաքուր» հիմքերը ինքնին արտահայտում են կերպային իմաստներ: Ըստ Գ. Բ. Զահուկյանի, հայերենում գոյություն ունի բայական երկու կերպ՝ սահմանային (կատարյալ) և ոչ-սահմանային (անկատար): Այս հիմնական կերպային հակադրությունը զուգակցվում է մասնակի դրսևորում ունեցող միակատարություն—բազմակատարություն և վերջինիս հետ կապված ոչ-տեսականություն—տեսականություն իմաստային հակադրության հետ, որը եղելության քանակական՝ գործողության միակատարության կամ բազմակատարության արտահայտությունն է¹⁰,

Հայերենի և անգլերենի կերպերը զուգադրելիս հիմք ենք ընդունել հայերենի բայական կերպի ըմբռնման այս մոտեցումը:

Անգլերենում կերպի քերականական կարգի գոյությունը բացահայտել է Ա. Ի. Սմիռնիցկին¹¹, Ըստ նրա, անգլերենի բայական համակարգում առանձնանում են կերպային երկու ձև՝ անորոշ (Indefinite) և շարունակական (Continuous), որոնց միջև եղած իմաստային տարբերությունը նա բնութագրում է որպես հակադրություն ընդհանուր և տեսական (շարունակական) կերպերի միջև: Առաջին կերպն արտահայտվում է բայի այսպես կոչված անորոշ (Indefinite) ձևերով, իսկ երկրորդը՝ be+Ving կապակցությամբ:

Հետագա մանրամասնությունների մեջ շմտնելով, նշենք, որ կերպային իմաստների արտահայտման ձևական միջոցները հայերենում և անգլերենում տարբեր են: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ հայերենում նկատվում է սերտ կապ կերպի և ժամանակի միջև (այսպես, սահմանական եղանակի ներկա ժամանակում կատարյալ՝ սահմանային—անկատար՝ ոչ-սահմանային կերպային հակադրությունը չի իրականանում), մինչդեռ անգլերենում նման սերտ կապ չկա. ընդհանուր և տեսական կերպերի միջև եղած հակադրությունն այստեղ անցնում է բայի ողջ համակարգով, բոլոր երեք ժամանակներով¹²: Հատկապես կարևոր է նշել, որ կերպային ձևերի քերականական իմաստները զուգադրվող լեզուներում միայն մասամբ են համապատասխանում, համընկնում: Այսպիսով, չնայած հայերենի և անգլերենի կերպերի որոշակի իմաստային ընդհանրությանը, նմանությանը, դրանց միջև գոյություն ունի նաև մեծ տարբերություն, որը հանգեցնում է որոշակի բարդությունների և դժվարությունների ինչպես ուսուցման պրոցեսում, այնպես էլ թարգմանելիս: Անդրադառնալով այժմ այն հարցին, թե որն է հայերենի և անգլերենի կերպերի իմաստային ընդհանրությունը և դրանց տարբերությունը, ինչպիսին է զուգադրվող լեզուների կերպային ձևերի գործառության փոխհարաբերությունը:

Հայերենում կատարյալ կերպի ձևը նշում է գործողությունն իր կատարման, իրականացման ամբողջության մեջ: Այլ կերպ ասած, այն ցույց է տալիս կատարված, ավարտված, ինքն իրեն սպառած գործողություն: Անկատար

¹⁰ Նույն տեղում, էջ 234—235:

¹¹ А. И. Смирницкий, Морфология английского языка, М., 1959, с. 316—327.

¹² Անգլերենի և հայերենի բայաձևերի համակարգի փոխհարաբերության մասին տե՛ս Հասմիկ Ասմանգուլյան, Ժամանակային վերաբերության կարգը անգլերենում և հայերենում (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1980, № 9, էջ 35—56):

կերպի ձևը նշում է գործողությունն իր ընթացքի, զարգացման մեջ, այսինքն՝ ներկայացնում է գործողությունը որպես անավարտ, շարունակվող, տևական գործողություն: Մյուս կողմից, սակայն, անկատար կերպի ձևը ինքնին չի ճշգրտում, թե գործողությունն ընթացքի մեջ է արդյոք ժամանակի այս կամ այն կոնկրետ մոմենտին, որևէ կոնկրետ ժամանակակետում կամ ժամանակահատվածում, թե՞ կրկնվող, բազմակատար կամ մշտապես տեղի ունեցող գործողություն է: Հմմտ. «Խ՛նչ ես անում»:—«Ընկերոջս նամակ եմ գրում» (հիմա, այս րոպեին) և «Ամեն ամիս ծնողներինս նամակ եմ գրում» (բազմակատար, կրկնվող գործողություն). «Տե՛ս, անիվը պտտվում է» (ներկա մոմենտին) և «Երկիրը պտտվում է արևի շուրջը» (մշտապես, շարունակ). «Երբ ներս մտա, նա դեռ հեռախոսով խոսում էր» և «Հին հռոմեացիները լատիներեն էին խոսում» և այլն: Սրան հակառակ, կատարյալ կերպի ձևը¹³ ցույց է տալիս կոնկրետ գործողություն, այսինքն՝ որևէ կոնկրետ ժամանակակետի կամ ժամանակահատվածի հետ հարաբերակցված գործողություն¹⁴: Հմմտ. «Երեկ ժամը 10-ին նա վերադարձավ գործուղումից» և «Երկու տարի աշխատեցի գյուղում և այնուհետև վերադարձա Երևան»: Այդ պատճառով էլ կատարյալ կերպի ձևը որպես կանոն չի կարող օգտագործվել կրկնություն, բազմակատարություն կամ մշտականություն ցույց տվող այնպիսի մակբայների ու մակբայական բառակապակցությունների հետ, ինչպես, օրինակ, շատ անգամ, հաճախ, բազմիցս, պարբերաբար, միշտ, ամեն անգամ, ամբողջ ժամանակ և այլն¹⁵:

Ինչ վերաբերում է անգլերենին, ապա այստեղ այսպես կոչված ընդհանուր կերպի (Common aspect) ձևը ինքնին բայով նշված գործողությանը չի տալիս որևէ կոնկրետ բնութագիր: Այս ձևով արտահայտված գործողությունը իր բնույթով կարող է լինել միակատար-վայրկենական (He dropped his purse—Նա դրամապանակը վայր գցեց), բազմակատար—կրկնվող (He always went to office at seven—Նա միշտ հիմնարկ էր գնում ժամը 7-ին), մի ամբողջ ժամանակահատվածում շարունակվող (He lived in Moscow from 1970 to 1978—1970-ից մինչև 1978 թիվը նա ապրում էր Մոսկվայում), ինչպես նաև ժամանակի մեջ չսահմանափակված (The earth revolves round the sun—Երկիրը պտտվում է արևի շուրջը) գործողություն¹⁶: Սակայն այդ իմաստներն արտահայտվում են ոչ թե ընդհանուր կերպի ձևով, այլ ի հայտ են գալիս միայն կոնտեքստում, շնորհիվ բայի բառային իմաստի և բայի հետ գուգակցվող բառերի (ժամանակի պարագաներ և այլն) իմաստի փոխազդե-

¹³ Խոսքն այստեղ վերաբերում է անցյալ կատարյալին:

¹⁴ Այս մասին տե՛ս նաև Հասմիկ Ասմանգուլյան, *նշվ. հոդվ.*, էջ 51—52:

¹⁵ Նման դեպքերում հայերենը կարող է օգտագործել վաղակատար, որը, ինչպես ցույց ենք տվել (տե՛ս Հասմիկ Ասմանգուլյան, *նշվ. հոդվ.*), հայերենի բայի հատուկ ձև է, որ ժամանակային վերաբերության քերականական կարգի սահմաններում արտահայտում է նախորդում, կերպային առումով տվյալ ձևը նույնպես կատարյալ կերպի ձև է, քանի որ վաղակատարն էլ, անցյալ կատարյալի նման, բնութագրվում է «ավարտվածություն» իմաստային բաղադրիչով: Սակայն, ի տարբերություն անցյալ կատարյալի, որը բնութագրվում է նաև «կոնկրետություն» իմաստային բաղադրիչով, վաղակատարը բնութագրվում է «անորոշություն» իմաստային բաղադրիչով, որով և հակադրվում է անցյալ կատարյալին:

¹⁶ Տե՛ս Л. С. Бархударов, Русско-английские языковые параллели («Русский язык за рубежом», 1973, № 4, с. 64).

ցության: Ինչ վերաբերում է անգլերենի տեղական՝ շարունակական կերպի (Continuous aspect) ձևին, ապա այն նշում է գործողությունն իր կոնկրետ բնթացքի մեջ, այսինքն՝ ցույց է տալիս ոչ միայն տեղական, շարունակվող, դեռ չավարտված, այլև որևէ կոնկրետ, որոշակի ժամանակակետի կամ ժամանակահատվածի հետ հարաբերակցված գործողություն: Հմմտ. When came in, he was reading¹⁷.

Հայերենի և անգլերենի կերպային համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով:

Աղյուսակ № 1

Լեզուն	Կերպային ձևը	Իմաստը
հայերեն	1. կատարյալ կերպ (անցյալ կատարյալ) 2. անկատար կերպ	1. ավարտվածություն 2. կոնկրետություն անավարտվածություն
անգլերեն	1. ընդհանուր կերպ 2. տեղական (շարունակական) կերպ	անորոշություն 1. անավարտվածություն 2. կոնկրետություն

Աղյուսակից երևում է, որ հայերենում կատարյալ կերպի ձևը (գրեցի, տեսա) ցույց է տալիս կատարված, ավարտված և կոնկրետ ժամանակակետի կամ ժամանակահատվածի հետ հարաբերակցված գործողություն: Անկատար կերպի ձևը (գրում եմ/էի, տեսնում եմ/էի) ցույց է տալիս անավարտ, շարունակվող, տեղական գործողություն, որը սակայն անպայմանորեն չի հարաբերակցվում որևէ որոշակի ժամանակակետի կամ ժամանակահատվածի հետ: Ինչ վերաբերում է անգլերենին, ապա այստեղ գործողության կոնկրետության իմաստը կապվում է ոչ թե գործողության ավարտվածության, այլ, ընդհակառակը, նրա անավարտվածության հետ՝ տեղական, շարունակական կերպի ձևում: Ընդհանուր կերպի ձևը, ի տարբերություն հայերենի կատարյալ կերպի, գործողությանը, ինչպես տեսանք, չի տալիս ոչ մի կոնկրետ բնութագիր և կարող է ցույց տալ ինչպես ավարտված, այնպես էլ անավարտ, ինչպես կոնկրետ, այնպես էլ կրկնվող, անորոշ—տեղական և այլն գործողություն: Այստեղից հետևում է, որ հայերենի կատարյալ կերպի քերականական իմաստն ավելի նեղ է, քան անգլերենի ընդհանուր կերպի իմաստը, մինչդեռ հայերենի անկատար կերպի իմաստն ավելի լայն է, քան անգլերենի տեղական (շարունակական) կերպինը: Հայերենի և անգլերենի բայի կերպային ձևերի այս փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով, որտեղ «Կ» տառով նշված է գործողության կոնկրետությունը (աղյուսակ № 2):

Անհրաժեշտ է նշել, որ նույնօրինակ հարաբերություն է բացահայտել Ա. Ի. Սմիռնիցկին ուսանողների և անգլերենի բայի կերպային ձևերի միջև¹⁸, որից հետևում է, որ կերպի քերականական կարգի տեսանկյունից հայերենը

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ А. И. Смирницкий, *նշվ. աշխ.*, էջ 325.

շատ ընդհանուր բան ունի ռուսերենի հետ¹⁹։ Հետևաբար, երեք լեզուների համար ընդհանուր բայական կերպի քերականական կարգի առկայության պայմաններում հայերենը և ռուսերենը տիպաբանորեն միևի մոտ են միմյանց, քան անգլերենը, որն այդ տեսակետից մոտավորապես նույն ձևով է հակադրվում և՛ հայերենին, և՛ ռուսերենին։

Ա Ղ Յ Ո Ւ Մ Ա Կ Ձ 2

Լեզուն	Հայերեն	Անգլերեն
կերպային հիմնական իմաստը		
գործողության փաստը	կատարյալ կերպ կ	ընդհանուր կերպ
գործողության ընթացքը	անկատար կերպ	շարունակական կերպ կ

Վերը նշված փոխհարաբերությամբ պայմանավորվում է նաև հայերենի և անգլերենի կերպային ձևերի փոխադարձ թարգմանությունը։ Այստեղ բացահայտվում են հետևյալ օրինաչափությունները։ Անգլերենի շարունակական կերպի ձևը միշտ թարգմանվում է հայերենի (ինչպես նաև ռուսերենի) անկատար կերպի միջոցով, մինչդեռ անգլերենի ընդհանուր կերպի ձևը հայերենի (և ռուսերենի) կարող է թարգմանվել ինչպես կատարյալ, այնպես էլ անկատար կերպի միջոցով։ Հակառակ դրան, հայերենից (ռուսերենից) անգլերենի թարգմանելիս, կատարյալ կերպի ձևը թարգմանվում է միայն ընդհանուր կերպով, մինչդեռ հայերենի (ռուսերենի) անկատար կերպի ձևը կարող է թարգմանվել անգլերենի ինչպես ընդհանուր, այնպես էլ շարունակական (տևական) կերպի ձևով։ Հմմտ.

անգլերեն

հայերեն

I was writing a letter.

Ես նամակ էի գրում

I wrote a letter.

1. Ես նամակ գրեցի։

2. Ես նամակ էի գրում։

Մյուս կողմից հմմտ.

հայերեն

անգլերեն

Ես նամակ գրեցի։

I wrote a letter.

Ես նամակ էի գրում։

1. I was writing a letter.

2. I wrote a letter.

¹⁹ Այս լեզուների նմանությունն արտահայտվում է նաև նրանում, որ ռուսերենում ևս, հայերենի նման, կատարյալ-անկատար կերպային հակադրությունը ներկա ժամանակում չի իրականանում, քանի որ ռուսերենում կատարյալ կերպը ունի միայն ժամանակային երկու ձև՝ անցյալ (написал գրեցի) և ոչ-անցյալ (напишу «կգրեմ»), մինչդեռ անկատար կերպի համար բնորոշ է երեք ժամանակային ձև՝ անցյալ (писал գրում էի) և ոչ-անցյալի ներստում՝ ներկա (пишу գրում եմ) և ապառնի (буду писать գրելու եմ)։

Այն դեպքում, երբ հայերենի (անգլերենի) մի կերպային ձևին մյուս լեզվում համապատասխանում է երկու ձև, փոխադարձ թարգմանության ժամանակ կերպային ձևն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես բայի բառային իմաստը, այնպես էլ բայի հետ կապակցվող բառերի, առաջին հերթին ժամանակի և ձևի պարագաների բնույթը: Այսպես, օրինակ, եթե բայն իր բառային իմաստով արտահայտում է վայրկենական, միակատար գործողություն (օրինակ, drop, fall, stop, send և այլն), ապա անգլերենի ընդհանուր կերպի ձևին հայերենում, որպես կանոն, կհամապատասխանի կատարյալ կերպի ձևը՝ Հմմտ. *He dropped his purse*—Նա վայր գցեց դրամապանակը: *He fell*—Նա վայր ընկավ: *He stopped*—Նա կանգ առավ: *I sent him a letter*—Ես նրան նամակ ուղարկեցի և այլն:

Սակայն եթե բային զուգակցում է գործողության բազմակատարություն, կրկնություն կամ մշտականություն արտահայտող պարագա, ապա, անկախ բայի բառային բնույթից, հայերենում բայը կօգտագործվի անկատար կերպի ձևով. կատարյալ կերպի գործածությունն այս դեպքում բացառված է: Հմմտ. *Each time he tried to get up, he fell*—Ամեն անգամ, երբ փորձում էր վեր կենալ, վայր էր ընկնում: *I repeatedly sent him letters*—Ես պարբերաբար նրան նամակներ էի ուղարկում կամ ես բազմիցս նրան նամակներ եմ ուղարկել: *He stopped there several times*—Մի քանի անգամ նա կանգ էր առել (իջևանել էր) *ալմտեղ* և այլն²⁰:

Ինչպես կարելի է նկատել վերջին օրինակներից, անգլերենի ընդհանուր կերպի ձևը, երբ բային զուգակցում են գործողության բազմակատարություն, կրկնություն արտահայտող պարագաներ, կարող է թարգմանվել նաև հայերենի վաղակատարի ձևով: Այս դեպքում բացահայտվում է որոշակի տարբերություն հայերենի և ռուսերենի միջև (ռուսերենում նման դեպքերում միշտ օգտագործվում է անկատար կերպի ձևը), քանի որ հայերենը, ի տարբերություն ռուսերենի, ունի երրորդ՝ վաղակատարի ձևը, որտեղ, անգլերենի ընդհանուր կերպի նման, բացակայում է կոնկրետության իմաստը, որը բնորոշ է հայերենի կատարյալ կերպի (անցյալ կատարյալ) ձևին:

Այսպիսով, այն դեպքում, երբ անգլերենի ընդհանուր կերպի ձևը, կոնտեքստի բերումով, արտահայտում է ավարտված, բայց կրկնվող, անորոշ—տևական գործողություն, այն հայերեն է թարգմանվում ոչ թե կատարյալ կերպի ձևով, որն ունի կոնկրետ (սովորաբար միակատար) գործողության իմաստ, այլ վաղակատարով: Հետևաբար, անգլերենի և հայերենի համապատասխան կերպային ձևերի փոխադարձ թարգմանության ժամանակ պատկերն ալվելի է բարդանում վաղակատար ձևի միջարկմամբ:

Հայերենի և անգլերենի կերպային ձևերի փոխադարձ թարգմանության ընդհանուր օրինաչափությունները կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (աղյուսակ № 3):

Վերջապես, ինչպես կարելի է տեսնել վերը բերված օրինակներից, գործողության ընթացքի բնույթը (ավարտվածություն—անավարտվածություն, միակատարություն—բազմակատարություն, տևականություն—ոչ-տևականություն) անգլերենում, ինչպես նաև հայերենում կարող է արտահայտվել ոչ

²⁰ Անգլերեն օրինակները վերցված են Լ. Ս. Բարխուդարովի վերը նշված հոդվածից (էջ 64—65):

միայն ռայի կերպային ձևերի, այլև մի ամբողջ շարք փոխներգործող բառային և կոնտեքստուալ միջոցների օգնությամբ:

Հայերենի և անգլերենի բայի կերպային ձևերի զուգադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ զուգադրվող լեզուների միջև գոյություն ունեն տարբերություններ ինչպես կերպային իմաստների արտահայտման ձևական (ֆորմալ) միջոցների, այնպես էլ կերպային ձևերի քերականական իմաստների

ԱՆԳԼՈՍԱԿ Մ 3

Նկատարային լեզուն	Կերպային ձև	Թարգմանություն թյան լեզուն	Կերպային ձև
անգլերեն	շարունակական կերպ (Continuous)	հայերեն	անկատար կերպ
	ընդհանուր կերպ (Indefinite)		1. կատարյալ կերպ 2. անկատար կերպ 3. վաղակատար
հայերեն	կատարյալ կերպ	անգլերեն	ընդհանուր կերպ (Indefinite)
	անկատար կերպ		1. շարունակական կերպ (Continuous) 2. ընդհանուր կերպ (Indefinite)

միջև: Չնայած որոշ իմաստային նմանությանը, որ հիմք է տալիս հայերենի և անգլերենի կերպի քերականական կարգի զուգադրական ուսումնասիրության կատարելու, զուգադրվող լեզուների միջև գոյություն ունի զգալի տարբերություն ինչպես համեմատվող կերպային ձևերի քերականական իմաստի ծավալի, այնպես էլ այդ ձևերի գործառնության տեսանկյունից: Իսլափազանց կարևոր է հաշվի առնել ինչպես անգլերենի ուսուցման, այնպես էլ մի լեզվից մյուսին կատարվող թարգմանության ժամանակ:

КАТЕГОРИЯ ВИДА В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

АСМИК АСМАНГУЛЯН

Резюме

Категория глагольного вида является одной из сложных грамматических категорий, в отношении которой как в армянском, так и в английском языке до сих пор остается много неясного и спорного.

Сопоставительный анализ видовых форм глагола армянского и английского языка показал, что между сравниваемыми языками имеются различия как в формальных средствах выражения видовых значений, так и в грамматических значениях видовых форм. Несмотря на определенное семантическое сходство, дающее основание для сопоставительного изучения категории вида в армянском и английском языках, между ними существует и глубокое различие как в объеме грамматического значения сопоставляемых видовых форм, так и в функционировании этих форм, что очень важно учесть как при обучении английскому языку в армянской аудитории, так и при переводе с одного языка на другой.